

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ
<<ԲԱԶԵ 2014>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ <<ԿՈՏԱՅՔ>> ԶՈԿԱՏԻ
ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հարգարժան երիտասարդներ

Սիրելի՛ բազեականներ

Սիրով ողջունում եմ բոլորիդ <<Բազե 2014>> համահայկական երիտասարդական հավաքին մասնակցության մեկնելու առիթով և միաժամանակ փոխանցում եմ նաև ՀՀ Կոտայքի մարզպետ պարոն Հարությունյանի շնորհավորանքները Ձեզ՝ այս հիշարժան օրվա կապակցությամբ:

<<Բազե>> երիտասարդական հավաքը, իրավամբ, մի նշանակալի ու կարևոր նախաձեռնություն է, որն արդեն իսկ դարձել է կայացած ու կատարելագործված մի միջոցառում, երիտասարդների դրսևորման մի լավագույն հարթակ:

Վստահ եմ, որ <<Բազե 2014>>-ը դառնալու է Ձեր կյանքի լավագույն ու անմոռանալի էջերից մեկը և հավաքից ստացած փորձը, տպավորություններն ու գիտելիքները Ձեզ ուղեկցելու են կյանքի ամենատարբեր հատվածներում:

Երիտասարդական յուրաքանչյուր միջոցառում, յուրաքանչյուր ձեռնարկ, առավել քան կարևոր է. կարևոր է իր գաղափարախոսությամբ, տրամաբանությամբ և մտածողությամբ:

Այս տեսանկյունից դիտարկելու պարագայում՝ հստակ ուրվագծվում է համահայկական երիտասարդական հավաքի կարևորությունը, վերջինիս մասնակցող երիտասարդների մոտ ազգային, պետական ուրույն մտածողություն ձևավորելուն միտված սկզբունքային մոտեցումներն ու երիտասարդ մարդու մտավոր և ստեղծագործ ներուժն արդյունավետորեն բացահայտելու շեշտադրումները:

<<Բազե>> հավաքում Ձեզ սպասվում են հետաքրքիր ու ինքնատիպ դրվագներով հագեցած յոթ օրեր, որոնցից յուրաքանչյուրը պարզևելու է անմոռաց հուշեր և հիշողություններ:

Լիահույս եմ, որ երիտասարդական հավաքի <<Կոտայք>> ջոկատի կազմում ընդգրկված ինը երիտասարդներն ապագայում դառնալու են լավագույն ընկերներ ու բարեկամներ և <<Բազե>>-ից ստացած տպավորություններն ու նոր գաղափարները տեղափոխելու են իրենց համայնքներ:

Ձեզ ցանկանում եմ նորովի հաջողություններ և ամենայն բարիք:

Շնորհակալություն:

18.08.2014թ.